

**ԴՊՐԱՑ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐ**

Ինչպես ամեն տարի, այս տարի եւս, հովանաւորութեամբ եւ բարձր տնօրինութեամբ Գանատայի Հայոց Թեմի, Բարեջան Առաջնորդ՝ Գերշ. Տ. Խաժակ Սրբ. Արք. Յակոբեանին, 12-13 Սեպտեմբեր, 2008-ին, տեղի ունեցաւ Թեմիս Դպրաց եւ Երիտասարդաց համագումարը, Գեմպրիճի Ս. Նշան Հայց. Առաք. Եկեղեցւոյ Հովիւին եւ հոգաբարձութեան հիւրընկալութեամբ:

Համագումարին ներկայ էին, Մոնթրեալի, Լաւալի, Թորոնթոյի, Գեմպրիճի, Սէնթ Գաթրինգի Հովիւները եւ շուրջ 95 մասնակիցներ:

Ուրբաթ 12 Սեպտեմբերին, յետ Երեկոյեան ժամերգութեան, տեղի ունեցաւ « ԸՐԻՍՏ. ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ» նիւթին շուրջ այնքան շահեկան դասախօսութիւնը, որ ներկայացուց Արժ. Տ. Գառնիկ Բնիյ. Գոյունեանը: Դասախօսութեանէն ետք եղան հարցադրումներ, որոնց հանգամանալից կերպով պատասխանեցին Առաջնորդ Սրբազան Հայրն ու Հոգեւոր Հովիւները:

Դասախօսութենէն ետք, տեղի ունեցաւ մտերմիկ ընթրիք եւ ծանօթացում բոլոր մասնակիցներու որոնք եկած էին Թեմիս բոլոր շրջաններէն՝ Վան Գուվըրէն, Մոնթրեալէն, Լաւալէն, Թորոնթոյէն, Գեմպրիճէն, Սէնթ Գաթրինգէն եւ այլ շրջաններէ:

Շաբաթ օր, յետ Առաւօտեան ժամերգութեան, Թեմիս Բարեխնամ Առաջնորդ Սրբազան Հայրը Դասախօսեց « ՅԻՍՆԱՄԵԱԿ ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ» նիւթին շուրջ: Սրբազան Հայրը մանրամասնութեամբ ներկայացուց Կիլիկեան Ս. Աթոռի 50-ամեայ գործունեութեան բոլոր հանգրուանները: Աւարտին տեղի ունեցաւ կարծիքներու փոխանակում ու բոլոր հարցադրումներուն սպառնիչ կերպով պատասխանեց Առաջնորդ Սրբազան Հայրը:

Համագումարի երրորդ ուսուցողական դասախօսութիւնը ներկայացուց, Ս. Յակոբ Եկեղեցւոյ Դպրապետուհի՝ Տիկին Յասմիկ Ինճեճիկեանը, գործնականօրէն բացատրելով հոգեւոր երաժշտութեան մեկնաբանման եղանակները որպէս ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԱՐՈՒԵՍ:

Համագումարի ընթացքին ուսուցուեցան Վերացման Ս. Խաչին Նուիրուած Շարականներ Արժ. Տեր Տեր Հրայր եւ Կոմիտաս քահանաներուն կողմէ:

Յետաքրքրական եղաւ նաեւ խմբային աշխատանքի դրութիւնը, որ յատկացուեցաւ ԸՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԵԱՆ:

Բոլոր մասնակիցներն ալ, գոհունակութեամբ հետեւեցան երկօրեայ համագումարի դասախօսութիւններուն եւ բոլոր խմբային աշխատանքներուն:

Նոյն օրը, յետ Կիրակմուտքի ժամերգութեան, Սրբազան Զօր Օրհնութեան խօսքով եւ քաջալերանքով, իր աւարտին հասաւ Զամագումարը: Սրբազան Զայրը գնահատեց բոլոր մասնակիցները, մանաւանդ Վան Գուվըրէն ժամանած երիտասարդները եւ յիշեցուց ըսելով. «Եկեղեցին, Դո՛ւք էք. առանց Դպրաց դասերու եւ երիտասարդութեան մեր Եկեղեցիները կ'աղքատանան: Դպրաց Դասերը Եկեղեցւոյ մը հաւաքական կեանքի գլխաւոր ցուցանիշներն են: Եկեղեցւոյ մը հոգեւոր եւ աղօթական կեանքի ներշնչման աղբիւրները Դպրաց դասերն են»: Ապա Սրբազան Զայրը յատուկ կերպով գնահատեց Գեմպրիճի հովիւ՝ Տ. կոմիտաս Քհնյ. Փանոսեանը, հոգոբարձութիւնն ու Տիկնաց Միութիւնը որոնք ոչ մէկ ճիգ իննայած էին լաւագոյն հիւրընկալութիւնը կատարելու:

Զամագումը փակուեցաւ Սրբազան Զօր Աղօթքով եւ «Պահպանիչ»ով:

Նոյն օրը, մասնակցեցան Ս. Խաչի Տօնախմբութեան, իսկ Կիրակի 14 Սեպտեմբերին, բոլոր Դպրաց Դասերը կատարեցին Ս. Պատարագի երգեցողութիւնը ղեկավարութեամբ Դպրապետուհի Յասմիկ Ինճեճիկեանի:

Յայկուհի Չաքմաքեան